

# Մ Ա Ս II - Բ


## Հ ա ր կ ա ք յ ո ջ Ե տ ա յ ի ն ց ու ց ա ն ի շ ն Ե Ր ի Կ ա ն խ ա տ Ե ս ու մ ն Ե Ր

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծի եկամուտների, ծախսերի, դեֆիցիտի մակարդակները ձևավորվել են մակրոտնտեսական զարգացումների ակնկալվող սցենարի սահմաններում, որն իր հերթին կանխատեսվել է տնտեսության զարգացման կայուն տեմպերի ապահովմանն ուղղված ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականության իրականացման անհրաժեշտությամբ թելադրված առանձնահատուկ մակրոտնտեսական պայմաններին համապատասխան և ներկայացվել է սույն ուղերձի մաս II-Ա-ում:

### Եկամուտների կանխատեսումներ

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային եկամուտների կազմում, ինչպես և նախորդ տարիներին, գերակշիռ մաս են զբաղեցնում հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով ակնկալվող մուտքերը:

*Գծապատկեր 2.1. ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային եկամուտների կառուցվածքը (%-ով ընդհանուրի նկատմամբ)*



ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 910.0 մլրդ դրամ եկամուտներ, որից հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով` 874.3 մլրդ դրամ:

2012 թվականի համար ծրագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների 874.3 մլրդ դրամ

մակարդակը գերազանցում է 2010 թվականի համադրելի<sup>1</sup> փաստացի մակարդակը 177.9 մլրդ դրամով, իսկ 2011 թվականի համադրելի<sup>1</sup> սպասողականը՝ 100.9 մլրդ դրամով: ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և պետական տուրքերի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների ընդհանուր գումարի հարաբերության ցուցանիշը 2010 թվականի փաստացի, 2011 թվականի սպասողական<sup>2</sup> և 2012 թվականի ծրագրային ցուցանիշներով հաշվարկված կկազմի համապատասխանաբար՝ 19.89%, 19.98% և 20.73%:

Բյուջետային եկամուտների՝ ըստ առանձին եկամտատեսակների կանխատեսումների մանրամասները ներկայացված են «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի բացատրագրի՝ եկամուտների կանխատեսմանը վերաբերվող մասում:

### **2012 թվականի ծախսերի մակարդակը և ծախսային գերակայությունները**

Հաշվի առնելով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի եկամուտների կանխատեսվող մակարդակը և դեֆիցիտի ու պետական պարտքի նպատակային ցուցանիշները, որոնք ներկայացվում են հաջորդ բաժնում, ՀՀ կառավարությունը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի ծախսերի ծավալը առաջարկում է սահմանել 1,042.5 մլրդ դրամի չափով:

ՀՀ կառավարության հիմնական ռազմավարական գերակայությունները սահմանված են 2008 թվականի ապրիլի 30-ին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած՝ ՀՀ կառավարության ծրագրով և ՀՀ կառավարության կողմից 2008 թվականի հոկտեմբերի 30-ին ընդունված Կայուն Զարգացման ռազմավարական ծրագրով: Վերը նշված փաստաթղթերի համաձայն ՀՀ կառավարությունն առաջիկա տարիներին առավել կարևորում է պետական բյուջեի ծախսային հետևյալ գերակայությունները (գերակայություն են համարվում այն ոլորտները, որոնց հատկացվում են լրացուցիչ բյուջետային ռեսուրսների զգալի մասը կամ որոնց ֆինանսավորման համար ներգրավում են վարկային ռեսուրսներ):

(i) սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,

(ii) հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը

<sup>1</sup> Առանց պետական բյուջեից ծախս-եկամուտ գործառույթի եղանակով ստացված եկամուտների և արտաբյուջետային հաշիվների եկամուտների:

<sup>2</sup> Հաշվարկված որպես «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված ցուցանիշների և սպասողական ՀՆԱ-ի հարաբերություն:

պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,

(iii) տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ՀՀ 2012թ պետական բյուջեից ծախսերի հիմնական ուղղություններին բաշխվող հատկացումների տեսակարար կշիռներն (տոկոսներով)՝ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի նկատմամբ:

*Աղյուսակ 2. 1. ՀՀ 2012թ պետական բյուջեից հիմնական ուղղություններին բաշխվող հատկացումների տեսակարար կշիռները (%-ով)*


Ուղղությունները	2012թ նախագիծ
1. Սոցիալ-մշակութային ճյուղեր	48.3
2. Պաշտպանություն, ազգային անվտանգություն, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և արտակարգ իրավիճակների համակարգեր	19.8
3. Տնտեսության ճյուղեր	13.2
4. Պետական պարտքի սպասարկում	4.5
5. Աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին (ֆինանսական համահարթեցման դոտացիաներ)	3.1

Այս ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունն ըստ հիմնական բաղադրիչների և մանրամասների ներկայացված է «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի բացատրագրի՝ մաս 3-ում:

### **Ֆինանսավորումը նվիրատուների կողմից**

2012 թվականին, ինչպես և նախորդ տարիներին, բյուջետային մուտքերի ընդհանուր ծավալը ձևավորվելու է նաև բյուջետային որոշ ծախսերի ֆինանսավորման համար օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից պաշտոնական դրամաշնորհների և արտոնյալ վարկերի տեսքով Հայաստանի Հանրապետությանը հատկացվող աջակցության հաշվին: Ստորև ներկայացված պատկերում արտացոլված են 2012 թվականի բյուջետային մուտքերի ընդհանուր գումարում ներքին և արտաքին աղբյուրներից ստացվելիք մուտքերի տեսակարար կշիռները (տոկոսներով):

Գծապատկեր 2.2. ՀՀ 2012 պետական բյուջեի մուտքերի ընդհանուր գումարում ներքին և արտաքին աղբյուրներից ստացվելիք մուտքերի տեսակարար կշիռները (%)



Այս հարցի վերաբերյալ տեղեկատվությունը ըստ հիմնական բաղադրիչների և մանրամասների և ներկայացված է «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի բացատրագրի մաս 3-ում:

### Պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) և պարտքերի մակարդակը

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը ծրագրավորվել է ՀՆԱ-ի 3.1 %-ի չափով և կազմում է 132.5 մլրդ դրամ: Վերը նշված բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներում ներքին աղբյուրների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ կկազմի մոտ 72.6%: Ղեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրների հիմնական մասը կազմում են պետական արժեթղթերի իրացումից ստացվելիք մուտքերը՝ 30.2 մլրդ դրամ, ինչպես նաև 2012 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների և կայունացման դեպոզիտային հաշվի միջոցների՝ բյուջետային ելքերի ֆինանսավորմանն ուղղվող մասը՝ համապատասխանաբար 37.3 մլրդ դրամ և 4.8 մլրդ դրամ:

Ղեռևա զգալի են արտաքին աղբյուրներից՝ միջազգային կազմակերպություններից (մեծամասամբ Համաշխարհային բանկի) և օտարերկրյա պետություններից ստացվելիք արտոնյալ վարկերի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորմանն ուղղվող միջոցները: ՀՀ պետական պարտքի 2011 թվականի արդյունքներով առկա և 2012 թվականի կանխատեսվող ընդհանուր կառուցվածքը (ըստ գոյացման աղբյուրների) և կանխատեսվող ծավալները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 2. 2. ՀՀ պետական պարտքը 2010-2012թթ (մլն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	2010թ	2011թ	2012թ
	փաստացի	սպասողական	նախագիծ <sup>3</sup>
Պետական պարտք՝ ընդամենը	3,795	4,373	4,764
այդ թվում՝			

<sup>3</sup> 2011 և 2012 թվականների համար ներքին պետական պարտքը հաշվարկվել է 1 ԱՄՆ դոլար=367.5 դրամ փոխարժեքով (01.09.2011թ դրությամբ արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեք (աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ)):

Ցուցանիշներ	2010թ	2011թ	2012թ
	վաստացի	սպասողական	նախագիծ <sup>3</sup>
արտաքին պարտք	3,299	3,805	4,117
որից՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտք	563	655	709
ներքին պարտք	496	568	647

Ինչպես երևում է աղյուսակից, կանխատեսումների համաձայն 2011 և 2012 թվականների տարեվերջի դրությամբ պետական պարտքի գերակշռող մասը (համապատասխանաբար 87.0%-ը և 86.4%-ը) բաժին է ընկնում արտաքին պարտքին:

### **Ժամկետանց պարտքեր**

ՀՀ կառավարությունը, ինչպես և նախկինում, կարևորում է ժամկետանց բյուջետային պարտքերի առաջացման երևույթի վերահսկումը, քանի որ դրանք ուղղակի վտանգ են ներկայացնում տնտեսության բնականոն կենսագործունեության համար: Բացի այդ, վերջիններս անվերահսկելիորեն առաջացնելով ՀՀ կառավարության լրացուցիչ պարտավորություններ, մեծացնում են ճնշումը առաջիկա տարիների ՀՀ պետական բյուջեների վրա, դրանով իսկ սահմանափակելով պետության՝ առանց այդ էլ սուղ ֆինանսական հնարավորությունները ռազմավարական ծրագրերի իրականացման գործում: Դրա հետ մեկտեղ կիրականացվեն միջոցառումներ կուտակված հարկային գերավճարների մարման և այդ գծով նոր պարտքեր չկուտակելու ուղղությամբ:

### **Հարկաբյուջետային ռիսկերը**

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծի իրատեսության տեսանկյունից առանցքային նշանակություն ունի ծրագրային սցենարից հնարավոր հիմնական շեղումների գնահատականը: Ընդ որում, այդ շեղումները հարկաբյուջետային շրջանակի վրա կարող են ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Այդուհանդերձ, առավել կարևոր են այն շեղումները, որոնք կարող են հանգեցնել բացասական հետևանքների և պահանջելու են համապատասխան վերանայումներ կատարել ծախսերի ծրագրերում: Այդ իմաստով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծի կանխատեսումները պարունակում են որոշակի ռիսկ և ռիսկային համապատասխան գործոնների բացահայտումը և դրանց գնահատականները էապես կարող են որոշակիացնել նախագծում կատարվելիք հնարավոր ճշգրտումների շրջանակները:

#### Ռիսկերի աղբյուրները

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծի շրջանակներում կարելի է տարանջատել ռիսկերի հետևյալ աղբյուրները, որոնք կարող են հանգեցնել ծրագրային ռեսուրսային փաթեթից բացասական շեղումների.

- (i) ներքին ռեսուրսների գծով,
- (ii) արտաքին օժանդակության գծով:

Ներքին ռեսուրսների մասով. 2011 թվականի սպասողական ցուցանիշի նկատմամբ 2012 թվականի բյուջետային ռեսուրսների փաթեթի համալրում նախատեսվում է ապահովել հիմնականում հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների աճի հաշվին, որոնք կկազմեն ընդհանուր եկամուտների ավելի քան 96%-ը: Վերջիններիս հավաքագրումը մեծապես կախվածության մեջ կլինի մի կողմից մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանությունից, իսկ մյուս կողմից՝ ակնկալվող ՀՀ հարկային օրենսդրության փոփոխությունների, հարկերի հավաքագրման բնագավառում ՀՀ կառավարության վարչարարական միջոցառումների իրականացման արդյունավետությունից: Նշված տնտեսական գործոններից բացի, այս դեպքում էական դեր ունի նաև հանրապետությունում տնտեսական միջավայրի վրա ներքին քաղաքական դաշտում զարգացումների և արտաքին գործոնների ազդեցությունները:

Մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանություն. Մակրոտնտեսական շրջանակում կատարված կանխատեսումների մասով առկա ռիսկերի մասին նշվել է սույն ուղերձի II -Ա մասում:

ՀՀ հարկային օրենսդրության փոփոխությունների, վարչարարական միջոցառումների իրականացում. Հետձգնաժամային ներկա փուլում ՀՀ կառավարությունը սկզբունքայնորեն շարունակում է իրականացնել իր կողմից որդեգրված՝ ստվերային տնտեսության ծավալների կրճատմանն ուղղված քաղաքականությունը, դրանով իսկ նպաստելով հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների հավաքագրման բնագավառում իրավիճակի բարելավմանը: Այս կապակցությամբ հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 2012 թվականին ռիսկի գործոնն առկա է և գնահատվում է 39.7 մլրդ դրամի չափով: Այս դեպքում տնտեսության ստվերային հատվածի կրճատման և լրացուցիչ բյուջետային մուտքերի հավաքագրման գրավականը հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվելիք միջոցառումների բարեհաջող ընթացքն է, որն ըստ նախորդ տարիների փորձի կարելի է համարել հուսալի:

Արտաքին գործոնների ազդեցություններ. Ռիսկը հնարավոր է արտաքին գործոնների ազդեցության արդյունքում հանրապետությունում տնտեսական միջավայրի կտրուկ վատթարացման դեպքում և այն գնահատման ենթարկել հնարավոր չէ:

Արտաքին օժանդակության մասով 2012 թվականին բյուջետային ռեսուրսների փաթեթի համալրում նախատեսվում է ապահովել ինչպես պաշտոնական դրամաշնորհների, այնպես էլ վարկերի հաշվին:

Պաշտոնական դրամաշնորհների մասով. Այդ միջոցների հատկացման հարցը կամ համապատասխան մուտքերի ստացման ռիսկի գործոնը մեծամասամբ պայմանավորված է լինելու ՀՀ կառավարության կողմից տնտեսության բարեփոխումների բնագավառում որոշակի միջոցառումների իրականացման ընթացքով:

Վարկերի մասով ռիսկերը հիմնականում պայմանավորված են ինչպես պաշտոնական դրամաշնորհների դեպքում նշված գործոնով, այնպես էլ ծրագրային ցուցանիշներից փաստացի կատարվելիք հատկացումների հնարավոր շեղումներով:

Ռիսկերի հնարավոր հետևանքները և ճշգրտումների ուղղվածությունը

Ներքին ռեսուրսների մասով մուտքերի ծրագրվածից ցածր մակարդակը ենթադրում է ծախսերի վերանայում կրճատման ուղղությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկային եկամուտները հիմնականում ամրագրված չեն որոշակի ծախսատեսակի կամ ծրագրի, ծախսերի ծրագրի վերանայումն իրականացվելու է՝ հիմք ընդունելով գերակայության սկզբունքը. այն է՝ առաջին հերթին կրճատվելու են այն ծախսատեսակների կամ ծրագրերի գծով նախատեսված ծախսերը, որոնք ունեն գերակայության ավելի ցածր աստիճան:

Արտաքին օժանդակության գծով մուտքերի թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայման մոտեցումները լինելու են տարբեր՝ կախված արտաքին օժանդակության բնույթից:

Համաձայն կանխատեսումների, ծրագրային ժամանակահատվածում արտաքին օժանդակության կառուցվածքում գերակշռելու են ծրագրային (նպատակային) բնույթի պաշտոնական դրամաշնորհներն ու վարկերը (70.5%):

*Աղյուսակ 2. 3. 2012թ ակնկալվող արտաքին օժանդակությունն՝ ըստ բնույթի*

Ցուցանիշներ	Գումարը (մլրդ դրամներով)	Տեսակարար կշիռը արտաքին օժանդակության ընդհանուր գումարում (%)
1. Ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակություն	40,69	29.5
1.1 Պաշտոնական դրամաշնորհներ	9.46	x
1.2 Վարկեր	31.23	x
2. Ծրագրային (նպատակային) օժանդակություն	97.23	70.5
2.1 Պաշտոնական դրամաշնորհներ	5.37	x
2.2 Վարկեր	91.86	x
Ընդամենը արտաքին օժանդակություն	137.92	100.0

Բյուջետային փաթեթում ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակության թերստացման պայմաններում ծախսերի ծրագրի վերանայումն իրականացվելու է՝ ելնելով դրանց գերակայության աստիճանից, մինչդեռ ծրագրային (նպատակային) պաշտոնական դրամաշնորհների և վարկերի թերստացումը հանգեցնելու է այն ծրագրերի գծով ծախսերի կրճատմանը, որոնք անմիջականորեն կապակցված են ֆինանսավորման այդ աղբյուրներին, թեև առանձին դեպքերում հնարավոր է այդ ծրագրերի գծով արտաքին աղբյուրներից ստացվող միջոցների փոխարինումը ներքին ռեսուրսներով:

*Աղյուսակ 2.4. 2010- 2012թթ առանձին մակրոտնտեսական ցուցանիշներ*

Եկամտատեսակը	2010 փաստացի 4	2011 ծրագիր	2012	
			2012-2014թթ ՄԺԾԾ	Նախագիծ
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	3,501.6	3,763.5	4,217.6	4,218.6
Իրական ՀՆԱ ինդեքս	2.10%	4.6%	4.20%	4.20%
ՀՆԱ դեֆլյատոր	9.17%	3.6%	4.60%	4.62%
1 ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը դրամով	373.66	357.98	369.93	367.50
1 Եվրոյի միջին տարեկան փոխարժեքը դրամով	496.03	499.99	524.01	525.45
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ (մլրդ դրամ)	759.7	852.4	892.9	910.0
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ/ՀՆԱ (%)	21.70%	22.65%	21.17%	21.57%
Պետական բյուջեի հարկային եկամուտներ, պետական տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ (մլրդ դրամ)	696.5	773.4	858.4	874.3
Պետական բյուջեի հարկային եկամուտներ, պետական տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ /ՀՆԱ (%)	19.89%	20.55%	20.35%	20.73%
Պետական բյուջեի հարկային եկամուտներ և տուրքեր (մլրդ դրամ)	591.1	650.0	716.3	732.3
Պետական բյուջեի հարկային եկամուտներ և տուրքեր /ՀՆԱ (%)	16.88%	17.27%	16.98%	17.36%
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ (մլրդ դրամ)	105.3	123.4	142.1	142.1
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ/ՀՆԱ (%)	3.01%	3.28%	3.37%	3.37%
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր (մլրդ դրամ)	934.1	1,001.0	1,025.4	1,042.5
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր/ՀՆԱ (%)	26.7	26.6%	24.3%	24.7%
Պետական բյուջեի դեֆիցիտ (մլրդ դրամ)	174.4	148.6	132.5	132.5
Պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ (%)	4.98%	3.95%	3.1%	3.1%

«ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծի հաշվարկներում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.1-րդ մասի պահանջի համաձայն կիրառվել են ս.թ սեպտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ արտարժութային շուկայում ձևավորված տարադրամի փոխարժեքները ՀՀ դրամով:

<sup>4</sup> 2010-2012թթ համադրելիությունն ապահովվելու նպատակով 2010 թվականի փաստացի ցուցանիշներում ներառված չեն ՀՀ 2010թ պետական բյուջեից ծախս-եկամուտ գործառույթի եղանակով ստացված եկամուտները և կատարված ծախսերը, ինչպես նաև 2011, 2012թթ չնախատեսված արտաբյուջետային հաշիվների 2010 թվականի փաստացի եկամուտներն ու ծախսերը:



Աղյուսակ 2.5 ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծի հաշվարկներում կիրառված տարադրամի փոխարժեքները ՀՀ դրամով

Տարադրամի տեսակը	դրամ
1 ԱՄՆ դոլար	367.50
1 եվրո	525.45
1 Մեծ Բրիտանիայի ֆունտ ստեռլինգ	595.94
1 Ռուսաստանյան ռուբլի	12.68
1 Շվեյցարական ֆրանկ	459.78
1 Կանադական դոլար	375.50
10 ճապոնական իեն	47.80